

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՕՋԱԽՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԹԻՒՆԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԸ

Թրիլիսիի համալսարանի հիմնադիրները, իվանև Զավախիշվիլու ղեկավարությամբ, վերացական համալսարանը հիմնադրելուց (1918 թ. 26 հունվարի) անմիջապես հետո կազմեցին համալսարանում դասավանդելիք առարկաների ծրագիր, որի մեջ մտցրին և հայագիտական առարկաներ՝ հին հայերեն լեզու (գրաբար), նոր հայերեն լեզու (աշխարհաբար) և հայ պատմական գրականություն: Գրաբարը ավանդում էր Ա. Շանիձեն, աշխարհաբարը՝ Դ. Ղիփշիձեն, իսկ պատմությունը՝ Իվ. Զավախիշվիլին:

Համալսարանի գոյության երկրորդ կիսամյակից (1918 թ. հոկտեմբերից) հայագիտական առարկաները դասավանդելու հրավիրվեց թրիլիսցի հայ գիտնական Լ. Մելիքսեթ-Բեկը:

1922 թ. համալսարանում կազմակերպվեց հայագիտության ամբիոն, որի առաջին վարիչը եղավ Լ. Մելիքսեթ-Բեկն ու պաշտոնավարեց այստեղ մինչև իր կյանքի վերջը (1963 թ. սեպտեմբեր): 1929 թ. Մելիքսեթ-Բեկը Թրիլիսիի համալսարանում դիսերտացիա պաշտպանեց. նրա ընդդիմախոսներն էին Իվ. Զավախիշվիլին և Ա. Շանիձեն:

Մինչև 1934 թ. հայագիտական ամբիոնը ներկայացված էր մեկ անդամով (Լ. Մելիքսեթ-Բեկ): 1929—1933 թթ. հայագիտության ամբիոնը մտավ արևելյան լեզուների ամբիոնների միավորման մեջ, որի վարիչը դարձյալ Լ. Մելիքսեթ-Բեկն էր:

1934 թ. հայագիտության ամբիոնն առանձնացավ: Այն ժամանակ ամբիոնում աշխատում էր երևանյան գործուղումից վերադարձած հայագետ Իլ. Աբուլաձեն, որը թեև 1938 թ. դադարեց մեր ամբիոնին աշխատակցել, բայց մինչև վախճանը (1968 թ.) շարունակում էր բեղմնավոր աշխատանքը հայ-վրացական գրական կապերի ուսումնասիրման գործում: Նա հայագիտության մի նոր օջախ ստեղծեց՝ Վրաստանի ԳԱ կազմում:

1936 թ. ամբիոնում որպես ասպիրանտ ըսկրսեց աշխատել Իվ. Բեգլարովը, որը երեք տարի անց պաշտպանեց թեկնածուական դիսեր-

տացիա, բայց դժբախտաբար, շուտով վախճանվեց (1942 թ.):

1939 թ. սկսած ամբիոնում որպես ասպիրանտ սկսում է աշխատել տողերիս հեղինակը: 1950 թ. ամբիոնի ասպիրանտներ Ա. Խառատյանն ու Մ. Մեսխիշվիլին պաշտպանեցին թեկնածուական դիսերտացիաներ: 1962 թ. ամբիոնն ընդունեց ևս մի ասպիրանտ՝ Մ. Ռորաբեիձեն, որին Լ. Մելիքսեթ-Բեկի մահից հետո ղեկավարում էր պրոֆեսոր Կ. Մելիք-Օհանջանյանը: 1970 թ. ամբիոնը ընդունեց էլի մեկ ասպիրանտ՝ Զ. Մեղուլաշվիլին: Բացի դրանից, համալսարանի հայագիտության բաժանմունքի ավարտողներից հայագիտության թեկնածուներ են՝ Լ. Դավիթանիձեն ու Բ. Արվելաձեն, իսկ համալսարանի մյուս ֆակուլտետների ավարտողներից՝ Զ. Ալեքսիձեն, Ն. Զանաշիան, Ն. Զաքարեիշվիլին ու Մ. Ռափավան: Վերջին չորս հայագետներին ղեկավարում էր պրոֆեսոր Իլ. Աբուլաձեն:

Մեծ բավականությամբ պետք է նշել, որ Թրիլիսիի համալսարանի հայագիտության բաժանմունքի շրջանավարտներից մեկը՝ Ռ. Գորգաձեն, ասպիրանտուրան ավարտեց Երևանի համալսարանում, պրոֆ. Գ. Սևակի ղեկավարությամբ և 1971 թ. նույն տեղում պաշտպանեց դիսերտացիա գրաբարի բայական կատեգորիաների վերաբերյալ:

Հայագիտության ամբիոնը մինչև 1945 թ. մտնում էր բանասիրական ֆակուլտետի կազմի մեջ և սպասարկում էր բանասիրական, պատմության ու իրավաբանական ֆակուլտետներին: Նույն թվականից, երբ մեր համալսարանում բացվեց արևելագիտության ֆակուլտետ, հիմնադրվեց և հայագիտական բաժանմունքը, և հայագիտության ամբիոնն էլ մտավ այդ ֆակուլտետի կազմի մեջ: Մինչև 1958 թ. հայագիտական բաժանմունքը ուսանողական կոնտինդենտ էր ընդունում չորս տարին մեկ անգամ, իսկ այնուհետև (մինչև այժմ) բաժանմունքը ամեն տարի ընդունելություն է կատարում:

Հայագիտական բաժանմունքում սովորող ուսանողության աճին զուգընթաց մեծանում էր

նաև մեր ամբիոնը: Եթե մինչև 1960 թ. այն ուներ միայն երկու անդամ (Ն. Մելիքսեթ-Բեկ, Իվ. Շիրակաձե), ապա 1960 թ. անհրաժեշտ եղավ հրավիրել մեկ դասախոս ևս (դոց. Ել. Դոշանաշվիլի), իսկ 1961—1962 թթ.՝ էլի մեկ դասախոս (դոց. Ա. Խառատյան): Այսպիսով, 1962 թ. մեր համալսարանի հայագիտության ամբիոնում աշխատում էին մեկ դոկտոր-պրոֆեսոր (Ն. Մելիքսեթ-Բեկ), երեք դոցենտ-թեկնածուներ (Ա. Խառատյան, Ել. Դոշանաշվիլի, Իվ. Շիրակաձե), մեկ ասպիրանտ (Մ. Ռոբաքիձե) ու մեկ լաբորանտ (Զ. Մեղուլաշվիլի):

Պրոֆ. Ն. Մելիքսեթ-Բեկի մահից հետո հայագիտության ամբիոնի վարիչ ընտրվեց Իվ. Շիրակաձեն: Մեկ տարի անց, պրոֆեսորի մահվան տարելիցին, համալսարանի արևելագիտության ֆակուլտետում ստեղծվեց պրոֆ. Ն. Մելիքսեթ-Բեկի անվան հայագիտության կարի-նետ: Հանգուցյալ պրոֆեսորի ընտանիքը այս կարիներին հանձնեց նրա անձնական գրադարանի բոլոր հայերեն գրքերը, որով կարի-նետը մեծապես հարստացավ հայագիտությանը վերաբերող գրականությամբ:

Եթե սկզբում համալսարանում հայագիտա-կան առարկաներից ավանդվում էին միայն գրաբար, աշխարհարար ու հայ պատմական գրականություն, ապա ամբիոնի ֆունկցիաների ընդլայնմանը զուգընթաց հետզհետե դրանց ավելացան նաև ուրիշ առարկաներ՝ հայ ժողովրդի պատմություն, հայ իրավունքի պատմություն, հայ հին և նոր գրականության պատմություն, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի ուսումնասիրության ներածություն, զանազան հատուկ դասընթացներ և այլն:

Հիսնամյա գոյության ընթացքում Թբիլիսիի համալսարանի հայագիտության ամբիոնը մեծարժեք գիտամանկավարժական ավանդ է ներդրել հայագիտության մեջ: Պրոֆեսոր Մելիքսեթ-Բեկը մեզ է թողել մոտ 600 աշխատու-թյուն, որոնցից մի քանիսը սովոր հատորներ են: Նրա հետազոտությունները մեծ մասամբ վերաբերում են հայ ժողովրդի պատմությանն ու գրականությանը: Պետք է շեշտել, որ նրա յուրաքանչյուր աշխատության նպատակն էր ամրապնդել հայ և վրաց ժողովուրդների միջև եղած բարեկամությունը, վեր հանելով նրանց դարավոր մշակութային կապերը: Հեռու կզնանք, եթե սկսենք տալ նրա աշխատու-թյունների մանրամասն բնութագրումը, բայց կարելի է ասել, որ իր կողմից հայտնաբերած փաստերը ցույց են տալիս ընդհանրապես ժողովուրդների, առանձնապես հայ և վրաց ժողովուրդների միջև պատմականորեն գոյություն ունեցած բարեկամությունը:

Դոց. Ա. Խառատյանը զբաղվում է հայ

գրականության ուսումնասիրությամբ ու հայ-վրաց գրական կապերի հարցերով: Նրա թեկ-նածուական դիսերտացիան էր՝ «Հայ գրակա-նությունը «Կովկասյան ցենզուրային կոմիտեի» գործերում»: Նա հրատարակեց նաև ուսումնա-սիրոթյուններ Վրաստանում գործող աշուղ-ների և գրողների մասին: Վրացերեն գրեց «Հայ նոր գրականության պատմություն» և այլն:

Դոց. Ել. Դոշանաշվիլին իր աշխատություն-ներում շոշափում է հին հայ-վրացական լեզ-վագրական կապերի հարցերը: Նրա թեկնա-ծուական դիսերտացիան էր՝ «Արմենիզմները Հաղիշի Ավետարանում» (1951 թ.): Նա ունի նաև մի քանի հոդված՝ նվիրված հայ պատմիչ-ների (օր. Սերեոսի) և աստվածաշնչի հայերեն ու վրացերեն տեքստերի համեմատությանը:

Իվ. Շիրակաձեն շոշափում է հայ-վրացա-կան գրական կապերի հարցերը և զբաղվում է հայ հին և նոր գրականության թարգմանու-թյամբ վրացերեն, բայց առանձնապես հետա-քրքրվում է արդի հայերենի կառուցվածքի ու հայ և վրաց լեզուների հարաբերության հար-ցերով: Նրա թեկնածուական դիսերտացիան էր «Հայոց լեզվի Համշենի բարբառը» (1944 թ.), որտեղ որոշ ընդհանուր գծեր է գտնում քարթ-վելական լեզուների (վրացերենի, լազերենի, մեգրելերենի) և հայերենի միջև, իսկ նրա դոկ-տորական դիսերտացիան էր՝ «Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները» (հրատարակ-վեց Երևանում, 1964 թ., հայերեն): Այստեղ հեղինակը նոր տեսակետից է լուսաբանում աշ-խարհաբարի բայի կառուցվածքի հարցերը և առաջ է քաշում նոր դրույթներ բայի ժամա-նակի, եղանակի, կերպի և մյուս կատեգորիա-ների վերաբերյալ:

Մեր ամբիոնի ասպիրանտ Զ. Մեղուլաշ-վիլին հաջողությամբ զբաղվում է հայ գրա-կանության թարգմանությամբ վրացերեն: Նա արդեն թարգմանել է Սայաթ-Նովայի հայերեն ու ադրբեջաներեն բանաստեղծությունները, Հ. Բումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի և ուրիշ հայ հեղինակների բազմաթիվ երկեր: Նրա դիսերտացիան է՝ «Սայաթ-Նովան»:

Ավագ լաբորանտ Մ. Ռոբաքիձեն արդեն ավարտել է ասպիրանտուրան և աշխատում է «Մատթևոս Ուտհայեցի» դիսերտացիոն թեմա-յի վրա: Լաբորանտ Լիա Լոմթաթիձեն ևս աշ-խատում է դիսերտացիոն թեմայի վրա:

Մեր ամբիոնը մասնակցել և մասնակցում է Վրաստանում եղած հայկական դպրոցների համար դասադրքեր կազմելու գործին (Ն. Մելիքսեթ-Բեկ, Իվ. Շիրակաձե), ինչպես նաև ձեռնարկներ է կազմում մեր ուսանողների հա-մար, օրինակ՝ «Հայ հին գրականության

պատմություն» (Լ. Մելիքսեթ-Քեկ, հրատ. 1941 թ.), «Գրաբարի քերականություն» քրեստոմատիայով ու բառարանով» (Իվ. Շիլակաձե, հրատ. 1955 թ.), «Հայ գրականության քրեստոմատիա» (Իվ. Շիլակաձե, հրատ. 1963 թ.), «Աշխարհագրի քերականությունը քրեստոմատիայով և բառարանով» (Իվ. Շիլակաձե, հրատ. 1971 թ.): Վրացերեն զրված այս դասագրքերով հեշտանում է և ամբիոնի աշխատանքը, և՛ ուսուցման դործը:

Մենք այստեղ չխոսեցինք Իվ. Ջավախիշվիլու, Ա. Շանիձեի, Իլ. Աբուլաձեի, Զ. Ալեքսիձեի և ուրիշների մեծարժեք հայագիտական աշխատությունների մասին, քանի որ այդ հե-

տազոտությունները կատարվել են մեր ամբիոնից դուրս:

Թբիլիսիի համալսարանի հայագիտության ամբիոնի ամրող աշխատանքի հիմնական նպատակն է՝ ծառայել հայագիտական կադրերի պատրաստմանը, հայագիտության մասսայականացմանը, հայ և վրաց ժողովուրդների դավոր բարեկամության ամրապնդմանը, որն այնպես հաջող սկսեցին մեր համալսարանի հիմնադիրները:

Ի. ՇԻԼԱԿԱԶԵ

Քանասիրական դիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Թբիլիսիի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ

ԹԻԲԼԻՍԻ Ա. Ս. ՊՈՒԾԿԻՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Թբիլիսիի Ա. Ս. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը դործում է 1939 թ., երբ Թբիլիսիում հիմնադրվում է հայ-ադրբեջանական երկամյա ուսուցչական ինստիտուտ: Ինստիտուտը կոչված էր պատրաստելու ֆիզիկայի և մաթեմատիկայի, բնագիտության և աշխարհագրության, մայրենի լեզվի և գրականության ուսուցիչներ՝ Վրաստանի հայկական և ադրբեջանական դպրոցների համար: 1941 թ. սեպտեմբերի 1-ից ինստիտուտը, որպես բաժանմունք, միանում է Թբիլիսիի Ա. Ս. Պուշկինի անվան ուսուցչական ինստիտուտին: Հետագայում ուսուցչական ինստիտուտը վերակառուցվում է մանկավարժական ինստիտուտի: Հայկական բաժանմունքը նույնպես:

Այսօր հայկական բաժանմունքի երկրորդ, երրորդ, չորրորդ կուրսերում ուսուցումը տարվում է մանկավարժության և տարրական կրթության մեթոդիկայի ֆակուլտետի պլանով: 1970—1971 ուսումնական տարվանից բաժանմունքում բացվեց նոր ֆակուլտետ՝ պատմա-բանասիրական: Ուսանողների հիմնական մասը Վրաստանի հայկական դպրոցների շրջանավարտներ են: Ուսանելու են դալիս նաև Հայկական ՍՍՀ շրջաններից՝ Թումանյանից, Իջևիլանից: Հայկական բաժանմունքում առաջնորդում աշխատել են պրոֆ. Մ. Ա. Մաղմանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Հայկ Ազատյանը, Լևոն Մելիքսեթ-Քեկը, պրոֆեսորներ Սիմոն Յուդրաշյանը, Տիգրան Աթաբեկյանը, Հարություն Նահապետյանը և ուրիշներ:

Մեծ է հայկական բաժանմունքի դերը Վրաստանի բազմաթիվ հայկական դպրոցների

և մշակութային օջախների համար: Այստեղ բարձրագույն կրթություն ստացած շատ երիտասարդներ Վրաստանի հայկական շրջաններում հայերեն դիր ու գրականություն են սովորեցնում մանուկներին: Բաժանմունքն ավարտած շրջանավարտներն աշխատում են նաև գրագրաններում, թերթերի խմբագրություններում, մշակութային-կրթական այլ հիմնարկներում: Բաժանմունքի շրջանավարտներից աշխատում են նաև Հայկական և Ադրբեջանական հանրապետություններում:

Մինչև 1953 թ. հայկական, ինչպես և ադրբեջանական բաժանմունքների գծով հատուկ ամբիոն չի եղել: 1953 թ. ստեղծվում է հայերեն և ադրբեջաներեն լեզուների և գրականությունների ամբիոն, որն ընդգրկում է մասնագիտական առարկաներ՝ ժամանակակից հայերեն լեզու, գրաբար, բարձրագիտություն, լեզվաբանություն, գրականության պատմություն, հայ գրականություն և այլն:

Ամբիոնը մեծ կարիք է գրում մասնագիտական երիտասարդ կադրերի:

Բաժանմունքը և ամբիոնը 1970—1971 ուսումնական տարվա ընթացքում մի շարք կարևոր միջոցառումներ են ձեռնարկել: 1970 թ. նոյեմբերին Խորհրդային Հայաստանի 50-ամյակի կապակցությամբ անցկացվեց գիտական նստաշրջան, ուր լսվեցին զեկուցումներ՝ «Հեղափոխությունը Հայաստանում և ն. Չարենցի ստեղծագործությունը», «Հայ-վրացական գրական կապերը խորհրդային շրջանում» և այլն: Տեղի ունեցավ հանդիսավոր երեկույթ, պատրաստվեց ցուցատախտակ՝ նվիրված Խորհրդային Հայաստանի նվաճումներին: Զեկուցում-

ներ կարդացվեցին ժամանակակից հայ ազգայնավոր գիտնականների կյանքի ու գործունեության մասին: Խորհրդային Վրաստանի 50-ամյակին ամբիոնի շորս անդամ զեկուցումներով հանդես են եկել ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական հորելյանական գիտական նրատաշրջանում (սովետահայ գրականությունը Վրաստանում», «Հայերեն լեզվի զարգացման սովետական փուլը» և այլն):

Հայկական բաժանմունքի Ուսանողական գիտական ընկերությունն ամբիոնի ղեկավարությամբ ձգտում է զարգացնել ուսանողների ստեղծագործական ինքնուրույնությունը և գիտական աշխատանքի հակումները: Ընկերության գործունեության ոլորտը բազմազան է: Անց են կացվում զեկուցումներ, կազմակերպվում են գրական բանավեճեր, գրական-գեղարվեստական հորելյանական երեկույթներ, էքսկուրսիաներ դեպի Թբիլիսիի հիշարժան վայրերը՝ կապված հայ գործիչների կյանքի ու գործունեության հետ, դեպի Հաղբատ, Դսեղ, Երևան, Մոսկվա, Լենինգրադ և այլն: Ընկերությունը մասնակցում է ինստիտուտի ուսանողական գիտական կոնֆերանսներին, զեկուցումների թեզիսները տպագրվում են ինստիտուտի ժողովածուներում: Ամբիոնը ղեկանատի հետ կազմակերպում է հանդիպումներ հայ և վրաց հասարակական գործիչների, գրողների, ինստիտուտի վրացական, ադրբեջանական, ռուսական մասնաճյուղերի ուսանողների, դասախոսների հետ, տեղի են ունենում դասախոսություններ, գրույցներ հասարակական, քաղաքական, մանկավարժական, մեթոդական, գրական հարցերի շուրջ:

Ամբիոնը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ինստիտուտի գրադարանի հայկական ֆոնդին: Մեծ է հայկական ֆոնդը, 3.000 անուն գիրք՝ քաղաքական, փիլիսոփայական, պատմական, լեզվաբանական, մանկավարժական, գրականագիտական, գեղարվեստական գրականություն: Արդեն մի քանի ամիս է, ինչ Երևանից պարբերաբար նոր հրատարակվող գրականություն է ստացվում: Ստացվում են նաև «Դրական թերթ», «Սովետական Հայաստան», «Սովետական դպրոց», «Սովետական մանկավարժ», «Սովետական հրականություն», «Դարուն», «Լիտերատուրնայա Արմենիա», «Պատմա-բանասիրական հանդես» պարբերականները: Երևանի պետական համալսարանը և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը ուղարկում են «Երևանի համալսարան» և «Մանկավարժ» թերթերը, բաժանմունքն իր հերթին նրանց է ուղարկում ինստիտուտի «Սարճոթա պեղագործ» թերթը:

Սերտ կապեր են ստեղծվել նշված ուսումնական հաստատությունների միջև: 1970 թ. փետրվարի 6-ի համարում «Երևանի համալսարան» թերթը երկու էջ հատկացրեց Թբիլիսիի ինստիտուտի հայկական բաժանմունքի և ամբիոնի կյանքին: Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժ» թերթը 1971 թ. փետրվարի 10-ի համարում նույնպես երկու էջ է նվիրել հայկական բաժանմունքի ուսումնա-գիտական առօրյային: 1970—1971 ուսումնական տարվանից ուսանողների փոխանակման կարգով Վրաստանից 50 հայ ուսանող սովորում են Երևանի մանկավարժական ինստիտուտում, մասնագիտանում են ֆիզիկայի, մաթեմատիկայի, բնագիտության, քիմիայի գծով: Ավարտելուց հետո նրանք աշխատելու են Վրաստանի հայկական դպրոցներում: Երևանից 12 ուսանող սովորում են Թբիլիսիի ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետի ռուսական մասնաճյուղում:

Ամբիոնում ընդգրկված հայագիտական առարկաների դասախոսները հիմնականում առաջնորդվում են Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսումնական ծրագրերով: Ուսանողները օգտագործում են Երևանում լույս տեսած ձեռնարկները, դասական լեզվաբանության ականավոր ներկայացուցիչների գործերը (Մ. Արեղյան, Հր. Աճառյան, Գր. Ղափանցյան), ժամանակակից լեզվաբանների և գրականագետների աշխատությունները:

Ամբիոնում հիմնականում գիտական աշխատանքը տարվում է Վրաստանի պարբերականներում և արխիվներում ամբարված նյութերի հիման վրա, որոնք հայ նաև անդրկովկասյան ժողովուրդների մշակույթի պատմության, նրանց մշակութային, գրական կապերի նոր, ուշադրով էջեր են բացում: Ամբիոնի անգամները իրենց գիտահետազոտական աշխատանքների արդյունքները տպագրում են ինստիտուտի «Աշխատություններում»: Դեռ 1940-ական թթ. (առաջին համարը լույս է տեսել 1941 թ.) տպագրվել են պրոֆեսորներ Լ. Մելիքսեթ-Ֆեկի («Мегалитическая культура в Грузии и её пережитки в эпоху Руставели», «И. Гришашвили и армянская литература», «Х. Абовян и Н. Бараташвили»), Ա. Մարտիրոսովի («К вопросу об отношении джавахского говора к месхетскому»), Ա. Մխիթարյանի («Пушкин и Армения», «Новые материалы о литературной деятельности И. Ф. Тхоржевского», «Неизвестные переводы из Беранже») և մյուսների աշխատությունները: Ամբիոնի անգամների հոդվածները տպագրվում են Երևան-

նում հրատարակվող «Պատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի համալսարանի», «Սովետական դրականություն», «Լիտերատուրնայա Արմենիա», «Գրական թերթ» պարբերականներում, ինչպես նաև Թբիլիսիի դիտական, հրական պարբերականներում, զեկուցումներով հանդես են դալիս «Գիտելիք» ընկերության, Թբիլիսիի ժողկրթբաժնի մեթոդական կարինետի զծով, գրողների տանը և այլուր, մասնակցում են դիտական նստաշրջաններին, միութենական կոնֆերանսներին և խորհրդակցություններին, մշակում են միջնակարգ դպրոցում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի հարցերը:

Կուզեինք հիշատակել նաև, որ ամբիոնի ղեկավարությամբ հետաքրքիր թեմաների վրա են աշխատում Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսաց լեզվի դասախոս Ա. Բարսեղովան և Թբիլիսիի № 38 միջնակարգ դպրոցի ուսաց լեզվի և գրականության դասատու Ռ. Շախգուլովը: Երկուսն էլ ուսական կրթություն են ստացել և այժմ մասնագիտանում են հայ գրականության բնագավառում: Ա. Բարսեղովան աշխատում է «Հայ մշակույթի

և գրականության հարցերը ժամկազ» թերթում (1846—1918 թթ.), իսկ Ռ. Շախգուլովը «Հայ մշակույթի և գրականության հարցերը Թբիլիսիի ուսական պարբերականներում (սովետական շրջան, 1921—1971 թթ.)» թեմաների վրա:

Ամբիոնի կազմի աճի և աշխատանքների ծավալման ու խորացման հեռանկարները շատ են: Պատմա-բանասիրական ֆակուլտետի ծրագրով դեռևս աշխատում է միայն առաջին կուրսը: Հաջորդ ուսումնական տարիներին կավելանան նույն ֆակուլտետի նոր կուրսեր և, բնական է, բանասիրական նոր առարկաներ, նոր մասնագետներ: Հնարավորություններ կընձեռվեն լայնացնելու գիտական հետազոտությունների և ուսումնա-մեթոդական աշխատանքների շրջանակները:

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ա. Ս. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի ճայերեն և ադրբեջաներեն լեզուների և գրականությունների ամբիոնի վարիչ:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ricerca sull' Architettura Armena. No 3, Bibliografia. 65 p.

«Հետազոտություններ հայ ճարտարապետության մասին» ընդհանուր խորագրով լույս տեսնող այս մատենաշարի № 3-ում հրատարակված է Արմեն Զարյանի, Ադրիանո Ալպագո Նովելլոյի և Հերման Վահրամյանի կազմած հայ ճարտարապետության մատենագրությունը:

Մինչև այժմ հրապարակված մատենագրական ցանկերի (Ա. Սալմասյան, Ե. Ութուշյան և ուրիշներ) համեմատությամբ այս մատենագրությունը ամենածավալունն է. նրանում ընդգրկված են ավելի քան 850 հեղինակների աշխատությունները հայ ճարտարապետության վերաբերյալ: Գրքի վերջում զետեղված են մատենագրական ցանկում նշված պարբերական հրատարակությունների հապավումների և օգտագործված աշխատությունների ցանկերը:

Միլանի պոլիտեխնիկ հումանիտար գիտությունների ինստիտուտի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի համագործակցությամբ և Մանուկյան ֆոնդի նախաձեռնությամբ լույս ընծայվող այս հրատարակության երկրորդ հատորում զետեղված են Միլանի պոլիտեխնիկ հումանիտար գիտությունների ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի հայագետների կողմից 1968—1970

թթ. ընթացքում Իտալիայի զանազան քաղաքներում, Վիեննայում, Բուենոս-Այրեսում, Աթենքում, Երուսաղեմում և այլ վայրերում կազմակերպված հայ ճարտարապետության վերաբերյալ ցուցահանդեսային նյութեր: Այդ ցուցահանդեսների կազմակերպմանը օգնել են Իտալիայի հայ մշակութային միության, Բուենոս-Այրեսի հայ դադուքի ներկայացուցիչները և ուրիշներ: Խորհրդակցությունները և դասախոսությունները վարել են Ադրիանո Ալպագո Նովելլոն, Արմեն Մանուկյանը, Հարություն Քաղանճյանը, Հերման Վահրամյանը և Պաուլո Կունեոն: Հատորում կան նաև տեղեկություններ պատմական և Սովետական Հայաստանի հուշարձանների ուսումնասիրության նպատակով Իտալացի և հայ ճարտարապետների բազմաթիվ ճանապարհորդությունների մասին: Հատորի վերջում տպագրված են Սովետական Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետական հուշարձանների, այդ հուշարձանների սե-սպիտակ կամ գունավոր լուսանկարների ցանկերը և Միլանի պոլիտեխնիկ հումանիտար գիտությունների ինստիտուտի հայագիտական կենտրոնի ֆոնդերում գտնվող հայ ճարտարապետությանը և ընդհանրապես հայ մշակույթին նվիրված գրականության ցուցակը: